

եւ ուռճալիւր պատուով ընկալեալ եղեւ ի նմանէ : Եւ զի կամեցաւ ի սոյն ամանակի խնդրել յարքայէն զի բարձցէ զծանրալուծ հարկն եւ ազատեսցէ զեկեղեցին . զոր նախաբարքն ոչ ետուն թոյլ , սակեւ թէ այժմ անձա՛հ եւ անպատեհ է սակս խուճապի յառաջակայ մարտիս . քանզի խստագոյն պատերազմ կայր ի կողմանս Բաբելոնի (Բաղդադի) . այլ մեք , ասեն , ի դիպող ժամու գեկուցուք արքայի : Եւ անտի դարձեալ եկն ի Վաղարշապատ առ ի շինութիւն եկեղեցւոյն ըստ առաջին նուագին» :

Այս երրորդ ուղեւորութիւնը դէպի Պարսկաստան պատահած է Սահակ կաթողիկոսի փախուստէն ետքը , 1628ին , հաւանօրէն վարնան : Նախարարներու տուած խորհուրդը , թէ հարկին խնդիրը յետաձգէ ուրիշ պատեհագոյն առթի «սակս խուճապի յառաջիկայ մարտիս» , պէտք է իմանալ այն իմաստով թէ Բաղդադի վրայ կը սպասուէր նոր յարձակողական մը . արդեամբք ալ յաջորդ տարւոյն զարնան շարժեցաւ օսմանեան բանակը դէպ ի Բաղդատ : Առաքել Դաւրիժեցւոյ համաձայն նախարարները ետ կեցուցած են զՄովսէս իր խորհուրդէն , ակնարկելով թէ «այս թաղաւորս յոյժ արծաթասէր եւ աղա՛հ է , եւ յայդքան շահուց արծաթոյ ոչ զանց առնէ . եւ մանաւանդ զի զգործդ այդ իւր է հաստատեալ» : Թախծեալ սրտով ստիպուեցաւ վարդապետը բռնել դարձի ճանապարհը (Դաւր . 308) :

Նոր էր վերադարձած Մովսէս վարդա-